ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պետության աշխարհաքաղաքականություն գիտության ճյուղի ծննդյան և կայացման անհրաժեշտությունը պայմանավորվում է հատկապես՝

1. պետության՝ որպես աշխարհաքաղաքական սուբյեկտի՝ աշխարհաքաղաքականություն գիտության բովանդակության մեջ համալիր ուսումնասիրությունների արդյունքների բացակայությամբ, դրանց ստեղծման անհրաժեշտությամբ, աշխարհաքաղաքականության կառուցվածքում պետության տարածքն իր որակական և քանակական բնութագրիչներով՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից համալիր ուսումնասիրող գիտության բացակայությամբ, դրա ստեղծման անհրաժեշտությամբ,

2. աշխարհաքաղաքականության համար մեթոդաբանական նշանակություն ունեցող այնպիսի տեսական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպիսիք են՝ պետության համալիր աշխարհաքաղաքական ուսումնասիրության մեթոդաբանության մշակումը, պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության մեթոդաբանության մշակումը, պետության աշխարհաքաղաքական անվտանգության հետազոտության մեթոդաբանության մշակումը և այլն,

3. ցանկացած պետության կողմից իր աշխարհաքաղաքական զարգացման մակարդակն ու հնարավորություններն օբյեկտիվ գնահատելու, ինչպես նաև իր համար աշխարհաքաղաքական առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող պետությունների աշխարհաքաղաքական զարգացման հնարավորությունների ուսումնասիրության, դրանց աշխարհաքաղաքական վարքը կանխատեսելու անհրաժեշտությամբ,

4. աշխարհաքաղաքականության գործնական գործառույթի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

Պետության աշխարհաքաղաքականություն գիտության ճյուղի ձևավորման ու կայացման արդյունքում վերջինս կարող է նյութ մատակարարել աշխարհաքաղաքականության կառուցվածքային բաղադրիչներին (համամոլորակային, տարածաշրջանային-մայրցամաքային, տարածաշրջանային-տեղական [2, էջ 15])՝ օժանդակելով դրանց արժանահավատ արդյունքների

ստեղծման գործընթացին: Մասնավորապես, առանձնահատուկ դեր կարող է խաղալ հատկապես առանձին պետությունների աշխարհաքաղաքական անվտանգության և զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող աշխարհաքաղաքականության երկրորդ՝ տարածաշրջանային-մայրցամաքային մակարդակի, ինչպես նաև համամոլորակային մակարդակի ուսումնասիրությունների արժանահավատ արդյունքների ստեղծման գործում:

Աշխարհաքաղաքականության ուսումնասիրությունների մակարդակների վերը նշված անունները խոսում են աշխարհաքաղաքական տարածության այն բաղադրիչների մասին, հետևաբար և ուսումնասիրության օբյեկտների մասին, որոնց ուսումնասիրում են վերը նշված գիտակարգ-ուղղությունները: Մասնավորապես, աշխարհաքաղաքականության համամոլորակային բաղադրիչը ուսումնասիրում է համամոլորակային աշխարհաքաղաքական տարածությունն ընդհանրապես, տարածաշրջանային-մայրցամաքայինը՝ մակրոտարածաշրջանները (մայրցամաքները, աշխարհամասերը), տարածաշրջանային-տեղականը՝ առանձին երկրների տարածաշրջանները: Այս շղթայում բացակայող օղակն է երկիր-պետություն համակարգը, առանձին պետության տարածքը, որի աշխարհաքաղաքական հետազոտությունների իրականացմանն էլ կոչված է պետության աշխարհաքաղաքականությունը:

Կարևոր է այն իրողության նկատմամբ ուշադրությունը, որ թեև առկա է քաղաքական աշխարհագրության (որի կազմում և ձևավորվել է աշխարհաքաղաքականություն գիտությունը)՝ ըստ տարածական ընդգրկման ուսումնասիրությունների մակարդակների մասին տարակարծություն, սակայն թե քաղաքական աշխարհագրությանը որպես ուսումնասիրությունների տարածական երեք մակարդակների ամբողջություն ներկայացնողները [1, էջ 20], թե չորս մակարդակներով ներկայացնողները [4, էջ 24] չեն անտեսում առանձին պետության տարածքի մակարդակը: Ըստ երևույթին քաղաքական աշխարհագրության ուսումնասիրությունների մակարդակների թվի ավելացման գործընթացը շարունակվում է, որի հիմք կարող է հանդիսանալ քաղաքական-տարածքային համակարգերի տեսակների մասին վերջերս տարածված պատկերացումը, ըստ որի առանձնանում են քաղաքական-տարածքային համակարգերի վեց տեսակ, որոնցից չորսը վերաբերում են պետության առանձին մասերին, հինգերորդը ներկայացնում է երկիրն ամբողջությամբ, վեցերորդը՝ աշխարաքաղաքական տարածաշրջանը, գեոստրատեգիական, մշակութային տարածաշրջանը [3, էջ 291-292]: Այստեղ չի կարելի չնկատել ամբողջ աշխարհի քաղաքական տարածության համակարգը անտեսելու փաստը:

Ներկայումս քաղաքական աշխարհագրության կազմում կայանում է աշխարհագրական պետությունագիտությունը, որը ներկայացնում է պետության տարածքի մակարդակը: Այսինքն, պետության տարածքն իր որակական և քանակական բնութագրիչներով համալիր ուսումնասիրությունների նախադեպը կա և սա միակը չէ, այդպիսիք են նաև երկրագրական ուսումնասիրությունները, որոնց նկատմամբ պետության աշխարհաքաղաքականության ուշադրության անհրաժեշտության հիմնավորումների անհրաժեշտությունը, կարծում ենք չկա:

Կարևոր է նաև այն իրողությունը փաստելը, որ աշխարհաքաղաքականության վերը նշված ուսումնասիրությունների մակարդակները ներթափանցում են քաղաքական աշխարհագրության համանուն մակարդակների ուսումնասիրություններ և սրանց սահմանների որոշումը կարող է օժանդակել աշխարհաքաղաքականություն-քաղաքական աշխարհագրություն փոխառնչությունների հարցի լուծմանը, դրանով՝ աշխարհաքաղաքականության՝ գիտությունների դասակարգման համակարգում տեղի պարզաբանմանը:

Փորձենք առանձնացնել պետության աշխարհաքաղաքականության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան՝ համեմատելով աշխարհաքաղաքականության ուսումնասիրության օբյեկտի ու առարկայի հետ:

Աշխարհաքաղաքականության ուսումնասիրության օբյեկտը համամոլորակային տարածությունն է, պետությունների խմբերը և առանձին պետությունները: Պետության աշխարհաքաղաքականությանը՝ որպես աշխարհաքաղաքականություն գիտության ճյուղին՝ որպես <u>օբյեկտներ</u> բաժին են ընկնում <u>առանձին պետությունները</u> և համամոլորակային տարածության առանձին բաղադրիչները ուսումնասիրվում են միայն առանձին պետության տեսանկյունից: Աշխարհաքաղաքականության առարկան աշխարհի աշխարհաքաղաքական տարածությունն է, աշխարհի աշխարհաքաղաքական կառուցվածքը: Մինչդեռ, պետության աշխարհաքաղաքականության ուսումնասիրության <u>առարկան</u> <u>առանձին պետություններն են՝ որպես աշխարհաքաղաքական հիմնական սուբյեկտներ</u>, աշխարհի աշխարհաքաղաքական կառուցվածքի հիմնական միավորներ, ինչպես նաև նրանց աշխարհաքաղաքական զարգացումը, աշխարհաքաղաքական անվտանգությունը, աշխարհաքաղաքական հզորությունը, աշխարհաքաղաքական ռեսուրսաապահովվածությունը և այլն: Իսկ պետության աշխարհաքաղաքականության <u>նպատակն</u> է տալ առանձին պետությունների աշխարհաքաղաքական զարգացման և աշխարհաքաղաքական անվտանգության ապահովման գիտական հիմքը:

Պետության աշխարհաքաղաքականության տեսական-մեթոդաբանական հիմնական խնդիրներն են՝

- մշակել պետության աշխարհաքաղաքական համալիր հետազոտության մեթոդաբանություն,
- մշակել պետության աշխարհաքաղաքական զարգացման հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք,
- մշակել պետության աշխարհաքաղաքական անվտանգության հետազոտության մեթոդաբանություն,
- մշակել պետության աշխարհաքաղաքական հզորության հետազոտության մեթոդաբանություն,
- մշակել պետության աշխարհաքաղաքական ռեսուրսապահովվածության հետազոտության մեթոդաբանություն,
- մշակել պետության աշխարհաքաղաքական դիրքի գնահատման մեթոդաբանություն:

Բոլոր այս խնդիրների լուծման, հետևաբար նաև պետության աշխարհաքաղաքականություն գիտության ճյուղի կայացման համար առանձնահատուկ նշանակություն ունի պետության աշխարհաքաղաքական հետազոտության մեթոդաբանության մշակման խնդիրը, որը ժամանակակից աշխարհաքաղաքականության կարևորագույն խնդիրներից է և որի լուծումը առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ ժամանակակից բարդ, դեռևս չձևավորված նոր աշխարհակարգի դժվար կանխատեսելի գործընթացների մեջ տարբեր պետությունների (մասնավորապես ինքնիշխանության պահպանման գործում բազմաթիվ հիմնախնդիրներ ունեցողների) կողմնորոշման, դրանց արդյունավետ գեոստրատեգիայի, աշխարհաքաղաքական անվտանգության, ընդհանրապես ազգային անվտանգության, ինչպես նաև պետության աշխարհաքաղաքական զարգացման և ընդհանրապես զարգացման գիտական հիմքի մշակման համար:

Պետության աշխարհաքաղաքական հետազոտության մեթոդաբանության մշակման խնդրի լուծումը կարող է ճանապարհ բացել աշխարհաքաղաքականության զարգացումը պայմանավորող տեսական-մեթոդաբանական այլ խնդիրների լուծման համար, արդյունքում՝ աշխարհաքաղաքականության զարգացման ցանկալի մակարդակի՝ աշխարհաքաղաքականության կողմից հասարակական պատվերի բավարարման ցանկալի մակարդակի ապահովման համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ պետության աշխարհաքաղաքական հետազոտության մեթոդաբանության մշակման խնդիրն ունի

բարդ կառուցվածք, որի առանձին բաղադրիչ-խնդիրների լուծումից և կախված է այս խնդրի լուծման արդյունքների արժանահավատությունը:

Մինչ այժմ այս կարևոր խնդրի լուծումը հնարավոր չի եղել նաև աշխարհաքաղաքական հետազոտություններում աշխարհաքաղաքականությանը հարակից գիտությունների հետազոտությունների արդյունքների նկատմամբ ոչ բավարար ուշադրության, դրանց ոչ նպատակահարմար օգտագործման: Խոսքը վերաբերում է մասնավորապես՝ աշխարհագրական տարբեր գիտությունների (աշխարհագրական պետությունագիտություն, աշխարհագրական երկրագրություն, տեսական հասարակական աշխարհագրություն և այլն), համակարգային մոտեցումը կիրառող այլ գիտությունների (սեկյուրիտոլոգիա, պետությունագիտություն, ռեսուրսագիտություն և այլն), ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներն ուսումնասիրող գիտությունների (քաղաքագիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, մշակութաբանություն և այլն) ուսումնասիրության արդյունքներին և մոտեցումներին:

Պետության աշխարհաքաղաքականություն գիտության ծյուղի կայացման և զարգացման համար կարևոր են հատկապես համաաշխարհաքաղաքական այնպիսի կատեգորիաների տեսական թերմշակության հաղթահարումը, ինչպիսիք են՝ «աշխարհաքաղաքական տարածությունը», «աշխարհի աշխարհաքաղաքական կառուցվածքը», «աշխարհի աշխարհաքաղաքական շրջանացումը», «աշխարհաքաղաքական ուժային կենտրոնը», «աշխարհաքաղաքական հարաբերությունները», «տարածքների վերահսկման մեթոդները», «էքսպանսիայի ձևերը», «ազդեցության ոլորտը», «աշխարհաքաղաքական իրավիճակը», իսկ ինչպես երևաց վերը շարադրվածից, այս գիտության համար առանձնահատուկ նշանակություն ունեն «պետության աշխարհաքաղաքական զարգացումը», «պետության աշխարհաքաղաքական անվտանգությունը», «պետության աշխարհաքաղաքական վտանգները», «պետության աշխարհաքաղաքական սպառնալիքները», «պետության աշխարհաքաղաքական հզորությունը», «պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները», «պետության աշխարհաքաղաքական շահը», «պետության աշխարհաքաղաքական դիրքը»:

Պետության աշխարհաքաղաքականության համար կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև համագիտական, քաղաքագիտական, աշխարհագրական գիտությունների այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «պետությունը», «իշխանությունը», «պետական քաղաքականությունը», «միջազգային հարաբերությունները», «միջազգային ինստիտուտները», «անվտանգությունը», «զարգացումը», «աշխարհագրական դիրքը», «աշխարհագրական տարա-

ծությունը», «աշխարհագրական հեռավորությունը», «աշխարհագրական շրջանացումը» և այլն:

Տեսական-մեթոդաբանական վերը նշված հիմնական խնդիրների լուծումը հնարավորություն կտա լուծելու այնպիսի գործնական խնդիրներ, ինչպիսիք են՝

- պետությունների (սկսած առաջին կարգի ուժային կենտրոններից, վերջացրած ամենաթույլ աշխարհաքաղաքական սուբյեկտ պետություններով) աշխարհաքաղաքական ռեսուրսապահովվածության գնահատումը,
- պետությունների աշխարհաքաղաքական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատումը,
- պետությունների աշխարհաքաղաքական հզորության գնահատումը,
- պետությունների առկա աշխարհաքաղաքական հզորության և աշխարհաքաղաքական ռեսուրսապահովվածության տարբերությունների բացահայտումը, դրանց փոքրացման մեխանիզմների մշակումը,
- պետությունների աշխարհաքաղաքական անվտանգության և աշխարհաքաղաքական զարգացման գլխավոր խնդիրների բացահայտումը, դրանց լուծման ուղիների որոշումը,
- պետությունների աշխարհաքաղաքական համալիր ուսումնասիրությունը, աշխարհաքաղաքական զարգացման հայեցակարգի մշակումը,
- պետության աշխարհաքաղաքական դիրքի գնահատումը, աշխարհաքաղաքական անվտանգության վրա աշխարհաքաղաքական դիրքի ազդեցության գնահատումը և այլն:

Այս հիմնական խնդիրները անմիջական կապ ունեն աշխարհաքաղաքականության արդի այնպիսի կարևոր խնդիրների հետ, ինչպիսիք են՝

- տարածքների վերահսկման ժամանակակից մեթոդների արդյունավետության գնահատումը,
- էքսպանսիայի ժամանակակից ձևերի ուսումնասիրությունը, դրանց արդյունավետության գնահատումը,
- աշխարհի աշխարհաքաղաքական ուժերի ենթակարգության, դրա փոփոխությունների ուսումնասիրությունը,
- աշխարհի աշխարհաքաղաքական շրջանացման իրականացումը,
- տարածքային-էթնիկական հակամարտությունների աշխարհաքաղաքական նշանակության ուսումնասիրությունը և այլն:

Աշխարհաքաղաքականության համակարգում պետության աշխարհաքաղաքականության տեղը նման է քաղաքական աշխարհագրության համակարգում աշխարհագրական պետությունագիտության տեղին՝ նա ներկայաց-

նում է պետական տարածքի մակարդակը, իր առանձնահատուկ՝ աշխարհաքաղաքական մոտեցմամբ ուսումնասիրում է պետական տարածքը, դրա որակական և քանակական բնութագրիչները, դրանց ամբողջությունը, դրա հիմքի վրա մշակելով պետության աշխարհաքաղաքական անվտանգության և աշխարհաքաղաքական զարգացման գիտական հիմքը, միաժամանակ ինչ-որ չափով ներթափանցում է նաև աշխարհաքաղաքականության ուսումնասիրությունների այլ մակարդակներ՝ ազգ-պետություն համակարգի՝ պետական տարածքի սահմաններից դուրս գտնվող բաղադրիչների (մասնավորապես սփյուռքի)՝ տվյալ պետության համար աշխարհաքաղաքական նշանակության ուսումնասիրությունների միջոցով:

Պետության աշխարհաքաղաքականության գործառույթները կարևոր են ընդհանարապես պետության արդյունավետ գործառնության համար:

Պետության աշխարհաքաղաքականության գործառույթներից հատկապես կարևոր են կառավարման, կանխատեսման և ճանաչողական գործառույթները: Իրար հետ կապված են ոչ միայն պետության աշխարհաքաղաքականության գործառույթները, այլև դրանք և պետության գործառույթներն ու պետական կառավարումը: Պետության ռազմավարական կառավարումը հնարավոր չէ առանց պետության աշխարհաքաղաքականության կառավարման գործառույթի արդյունավետ կատարման, վերջինս՝ առանց կաճաժամկետ, միջին ժամկետի և երկարաժամկետ որոնողական, նորմատիվային և ինտեգրալ կանխատեսման, իսկ կանխատեսումը՝ առանց ճանաչողական գործառույթի արդյունավետ կատարման:

Ցանկացած երկրի ժողովրդի կողմից իր ղեկավարությանը ներկայացրած համամոլորակային աշխարհաքաղաքական դաշտում իր երկրի արդյունավետ աշխարհաքաղաքական մրցակցության և աշխարհաքաղաքական զարգացման օբյեկտիվ պահանջը խոսում է պետության աշխարհաքաղաքականությանը ներկայացված գիտական կանխատեսման և երևույթների կառավարման գիտական ապահովման պատվերի մասին, սակայն այս գիտության կայացման խնդրի լուծման գործում առկա խնդիրները խոսում են դեռևս պետության աշխարհաքաղաքականության կանխատեսման և կառավարման գործառույթների կատարման օբյեկտիվ դժվարությունների, բարդությունների մասին: Պետության աշխարհաքաղաքականությունը առավելագույն արդյունավետ օգտագործելով թե աշխարհաքաղաքականության և թե հարակից գիտությունների գիտական արդյունքներն ու մոտեցումները, պետք է փորձի առավել կարճ ժամանակահատվածում հաղթահարել վերլուծության, բացատրության և տեսական ընդհանրացումների փուլը, հնարավորություններ

ստեղծելով գիտական կանխատեսման և երևույթների կառավարման գիտական ապահովման համար, որը ցանկացած պետության խնդիրների պահանջն է:

Պետության աշխարհաքաղաքականության զարգացման ցանկալի մակարդակը հնարավոր է ապահովել աշխարհաքաղաքական ինտեգրալ կանխատեսման մեթոդաբանության մշակման դեպքում միայն:

Առանց հետազոտության միջոցների և մեթոդների հնարավոր չէ պատկերացնել ցանկացած գիտություն:

Պետության աշխարհաքաղաքականությունը օգտագործում է գիտական ճանաչողության բոլոր միջոցները, սակայն սրա համար հատկապես կարևոր են լեզվական և տրամաբանական միջոցները, իսկ հետազոտությունների արդյունքների արժանահավատության ապահովման գործում մաթեմատիկական միջոցների դերը թեև կարևոր է և պետության աշխարհաքաղաքականության մեջ դրանց օգտագործումը ցանկալի, սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ մաթեմատիկայի լեզվով աշխարհաքաղաքական երևույթներն արտահայտելը օբյեկտիվ դժվարությունների հետ է կապված, իսկ նյութական միջոցները թեև այն մեծ դերը չունեն, ինչ բնական գիտությունների համար, սակայն առանց սրանց նույնպես անհնար է հետազոտական գործընթացներ ապահովելը (բավական է նշել կոմպյուտերի դերի մասին):

Գիտական ճանաչողության մեթոդներից պետության աշխարհաքաղաքականության համար կարևոր են թե համագիտական և կոնկրետ-գիտական մեթոդները և թե ինֆորմացիայի ստացման, մշակման և տեսական ընդհանրացումների մեթոդները:

Պետության աշխարհաքաղաքականության համար կարևոր են գործառնական, կառուցվածքային-գործառնական վերլուծության, գնահատման (աշխարհաքաղաքական գնահատման), դասակարգման, մոդելավորման, պատմահամեմատական, համեմատական-աշխարհագրական, կանխատեսման մեթոդները և այլն:

Պետության աշխարհաքաղաքականության համար գործառնական մեթոդի կարևորությունը բացատրվում է նրանով, որ այն պահանջում է տարբեր երկրների փոխկախվածության մանրամասն ուսումնասիրություն: Այս մեթոդը հենվում է պոզիտիվ-պրագմատիկ կողմնորոշումների վրա:

Կառուցվածքային-գործառնական վերլուծությունը պետությանը դիտարկում է որպես բարդ կառուցվածք ունեցող համակարգ, որի յուրաքանչյուր տարր կատարում է առանձնահատուկ գործառույթներ:

Գնահատման (աշխարհաքաղաքական գնահատման) մեթոդը հնարավորություն է տալիս պարզել երկրի ռեսուրսների, ներուժի աշխարհաքաղաքական օգտակարությունը, արժեքը:

Մոդելավորման մեթոդը տրամաբանական և մաթեմատիկական եղանակների օգնությամբ պետության աշխարհաքաղաքականության առարկաների կապերի և դինամիկայի վերստեղծման հնարավորությունն է, դասակարգման մեթոդը՝ պետության՝ որպես աշխարհաքաղաքական օբյեկտի և սուբյեկտի հիմնական հատկությունների դասավորման (խմբավորման) հնարավորությունը:

Պատմահամեմատական մեթոդի օգնությամբ պետության աշխարհաքաղաքականությունը ուսումնասիրում է ժամանակի ընթացքում պետության աշխարհաքաղաքական հիմնական բնութագրիչների փոփոխությունները, համեմատական-աշխարհագրական մեթոդի օգնությամբ՝ տարբեր պետությունների աշխարհաքաղաքական բնութագրիչների տարբերությունները:

Կանխատեսման մեթոդը (որի կարևորության մասին մասամբ նշվեց նաև պետության աշխարհաքաղաքականության գործառույթների կարևորության և դրանց կատարման անհրաժեշտության մասին վերը շարադրված դատողություններում)՝ պետության աշխարհաքաղաքական զարգացման հնարավոր ուղղությունների, դրա որակական և քանակական պարամետրերի ապագա վիճակի որոշման և գնահատման հնարավորությունն է:

Պետության աշխարհաքաղաքականության վերը նշված հիմնական այս մեթոդները ոչ միայն պետության աշխարհաքաղաքականության արդյունքների արժանահավատության ապահովման, այլև աշխարհաքաղաքականության համակարգի գիտական այլ ճյուղերի և ընդհանրապես աշխարհաքաղաքականության կարևոր հիմնախնդիրների լուծման հնարավորություններ են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վալեսյան Ա., Վալեսյան Լ. Քաղաքական աշխարհագրություն, Եր., 2005
2. **Исаев Б. А.** Геополитика: Учебное пособие. СПб., 2006.
3. **Колосов В. А., Мироненко Н. С.** Геополитика и политическая география. Учебник для вузов. М., 2001.
4. **Туровский Р. Ф.** Политическая география. Учебное пособие. М.-См., 1999.